

— Ահա,— ըսաւ գեղացին եւ շուտ մը շորերու փաթոյթէ հանեց տուաւ իշխանին:

— Սասանեաց ոսկի մը,— ըսաւ Մուշեղ նայելէն վերջ եւ նետելով դարձուց շինականին:— Ո՞ր կողմ գնացին:

— Դեպի Բաղէշ կ'երթային:

— Ինչպէ՞ս մարդ էր երիտասարդը:

— Զսան-քսաներկու տարու, քիչ մորուոք, քաղցր եւ գեղեցիկ աչքերով տղամարդ էր:

— Լաւ, իմացայ. եւ իշխանը ձեռոք ըրաւ, որ երթայ:

Երբ գիւղացին դուրս ելաւ ոսկին գետեղելով գրպանին մէջ, Մուշեղ երկար մտածութեան թաղուեցաւ, միտքը կը բերեր արաբացի ձիերու տէր երիտասարդը, նորա քաղցր ու գեղեցիկ աչքերը, տարիքը, դեռաբոյս միւրուքը, եւ Զամագասպայ ըսելը, թէ նամակին գիրը Գրիգորի գրին կը նմանէր: Այն նաեւ կը խորհրդածէր թէ Սուրբ Կարապետ երթալու խօսք ըրած էին այդ մարդիկը, եւ փոխանակ հիւսիս երթալու հարաւ կ'երթային: Ինչպէ՞ս նոյն գիշերը իւր յուղարկած խումբը դառնալով լուր բերին, թէ այնպիսի մարդիկ չէին եկած վանք:

— Բայց ինչո՞ւ Բաղէշ կ'երթային:— Չաւէն այնպէս որոշեց, որպէսզի եթէ Մուշեղ կասկածի իրենց փախստեան վրայ եւ խնդրակ հանէ, իրենք հակառակ ճամփով Ռշտունեաց իշխանութեան երկիրն արդէն հասած լինին. ինչպէս եւ եղաւ: Նոյն գիշերը մտան Բաղէշ հանգիստ: Եւ զուարթ՝ ինչչափ որ դառն յիշատակներ կը ներէին Գրիգորի զուարթ լինիւր Չաւէնի խորհուրդը այն էր, որ մինչեւ Ռշտունեաց Ոստանը հասնէին չի յայտնէ մարդու Գրիգորի եութիւնը. այս նաեւ Գրիգորի փափագն էր, որ մայրը կ'որսնցնելէն վերջը՝ իւր բոլոր սիրտը Թենիի վրայ դարձուցեր էր եւ չի համարձակելով ումէք յայտնել իւր սերը՝ անձամբ կուգեր երթալ տեղեկանալ: Ուստի այն գիշեր Բաղէշ անցնելէն վերջ՝ երկրորդ առաւօտուն ելան ճամփայ ուղղուելով դէպ Ոստան: Զանի՛ կը մօտենար Գրիգոր իւր նպատակին՝ երկիւղը սրտին կը տիրէր, նախանձը, որ միգուցէ՛ Թենի իրմէ յուսահատ ուրիշի մը իւր սիրտը տուած լինի՝ զինքը կ'ուտէր:

Հինգ օր ուղեղնացութենէ վերջ մտան Ոստան: Թեոդորոս հոն չէր. ձմեռային դահլիճը զիրենք տարին սպասաւորք եւ ահա մեր հին բարեկամը Յուսիկ եկաւ ողջունելու հիւրերը եւ տեղեկանալու իրենց որպիսութեան վրայ: Գրիգորի